ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» հունիսի 2018թ. N 120-Ա

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 1-ին և 2-րդ կետերը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել նախարարության աշխատակազմի ղեկավարին (այսուհետ՝ պատասխանատու անձ):

2. Հաստատել՝

1) ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) ազդարարի կողմից ներկայացված հաղորդումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Նախարարության աշխատակազմի քարտուղարությանը՝ ապահովել ազդարարի կողմից ներկայացված հաղորդումների գրանցամատյանում համապատասխան գրառումները:

4. Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը և հրամանով սահմանված պատասխանատու անձի տվյալները տեղադրել նախարարության կայքէջում:

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի հունվարի 19
N 120 Ա հրամանի

ՁԵՎ
ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները պատասխանատու անձի կողմից հաշվառվում են գրանցամատյանում (հավելված N 2)՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս այն օրենքով սահմանված կարգով վերահասցեագրել է իրավասու մարմնին:
2. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝
1) հաղորդման հաշվառման հերթական համարը.
2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.
4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.
6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.
7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
8) ազդարարի ստորագրությունը.
9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.
10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:
3. Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում, իսկ փաստաթղթային տարբերակով վարման դեպքում՝ նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:
4. Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:
5. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

Հավելված N 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի հունիսի 19
N 120 Ա հրամանի

ՁԵՎ

ԱԶԴԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՅԱՆԻ

Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդմամբ ներկայացված տեղեկատվության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Ազդարարի ստորագրությունը	Գրանցամատյանը վարողի	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

Կ.Տ.

Հավելված N 3
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի հոկտեմբերի 19
N 120 Ա հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:
2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ:
3. Ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է իրավասու մարմնի կողմից նշանակված պատասխանատու անձի միջոցով:
4. Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները:
5. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով իրավասու մարմինն իր իրավասության շրջանակներում՝
1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.
2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.
3) ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով.
4) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.
5) անհրաժեշտության դեպքում՝ ազդարարին հնարավորության դեպքում տեղափոխում է այլ աշխատասենյակ.
6) ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները.
7) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ: